Լոռու մարզի մարզպետ
պրն. Ա. Նալբանդյանին

07300746
Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզ
Փամբակի գյուղապետարան

24. 02. 2012թ.

Կից ներկայացնում ենք

ավագանու թիվ 03, 04 որոշումները։

Փամբակ համայնքի ղեկավար Ա.Հ. Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՓԱՄԲԱԿԻ ԱՎԱԳԱՆԻ

No 03-Ն

22.02.2012թ.

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետերի և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ գյուղական համայնքի 2011թ-ի բյուջեի կատարման հաշվետվությունը:

1. Եկամուտների գծով
   - Ընդամենը – վեց միլիոն չորս հարյուր ութանասուներկու հազար հինգ հարյուր դրամ այդ թվում՝
   - Վարչական բյուջեի մասով վեց միլիոն չորս հարյուր ութանասուներկու հազար հինգ հարյուր դրամ
   - Ֆոնդային բյուջեի մասով - զրո դրամ
2. Ծախսերի գծով
   - Ընդամենը – վեց միլիոն վեց հարյուր եռեսուներկու հազար չորս հարյուր դրամ

   այդ թվում՝
   - Վարչական բյուջեի մասով վեց միլիոն չորս հարյուր ութանասուներկու հազար հինգ հարյուր դրամ
   - Ֆոնդային բյուջեի մասով – հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր դրամ

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Թ. Բեգլարյան
Գ. Սարոյան
Ս. Գալստյան
Ա. Հովհաննիսյան

Համայնքի ղեկավար Ս. Լ. Ուլիխանյան

2012թ. փետրվար 22

գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՓԱՄԲԱԿԻ ԱՎԱԳԱՆԻ

No 04-Ն

22.02.2012թ.

# ՈՐՈՇՈՒՄ

## 25 ՆՈՅԵՄԲԵՐ 2011թ-Ի ԱՎԱԳԱՆՈՒ 17-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՈՐՈՇԵՑԻՆ*

1. 7-րդ կետի 4-րդ ենթակետով խաղերի և վիճակախաղերի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել ընթացիկ տարվա համար 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամ:
2. 5-րդ կետի 2-րդ ենթակետով հեղուկ վառելիքի գազի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամ:

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Թ. Բեգլարյան
Գ. Սարոյան
Ս. Գալստյան
Ա. Հովհաննիսյան

Համայնքի ղեկավար Մ. Լ. Ոսկիկանյան

2012թ. փետրվար 22

գ. Փամբակ